Հավելված 2
Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի
նախագահի 2015 թվականի նոյեմբերի 11-ի
թիվ ՆՈ- 046 -Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՈՒՇԱՄԵԴԱԼԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Սույնով սահմանվում է Հայաստանի Հանարապետության Ազգային ժողովի նախագահի շնորհակալագրի ու Հայաստանի Հանարապետության Ազգային ժողովի նախագահի հուշամեդալի նկարագրությունը:

2. Շնորհակալագրի վրա գրությունները նշված են ուղղահայաց (գրքային) տարբերակով:

3. Շնորհակալագրի վերևի մասի կենտրոնում «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» և «ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ» գրություններն են՝ երկու տողով, որից ներքև հակիրճ հիմնավորվում է պարգևատրելու հանգամանքը: Պարգևատրման հիմքից անմիջապես հետո նշվում են պարգևատրվող անձի անուն-ազգանունը, որից հետո նշվում են «ՊԱՐԳԵՎԱՏՐՎՈՒՄ Է», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ», «ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳՐՈՎ» գրությունները՝ յուրաքանչյուրն առանձին տողով:

4. Շնորհակալագրի շրջանակի ստորին ձախ մասում պատկերված է Ազգային ժողովի շենքի մոդելը:

5. Շնորհակալագրի շրջանակի ստորին կենտրոնական մասում՝ Ազգային ժողովի շենքի մոդելի դիմաց, նշված է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ» մակագրությունը՝ երկու տողով, որի դիմաց նշվում է Ազգային ժողովի նախագահի անունը, իսկ նշված գրությունների միջև որոշակի հատված է առանձնացված Ազգային ժողովի նախագահի ստորագրության համար:

6. Շնորհակալագրի շրջանակի ստորին աջ մասում մեկ տողով նշվում է «քաղ. Երևան» գրությունը և Շնորհակալագրի տրման տարեթիվը:

7. Շնորհակալագրի մակերեսին՝ կենտրոնական մասում, պատկերված է Հայաստանի Հանրապետության զինանշանը:

8. Շնորհակալագիրը զետեղվում է հատուկ թղթապանակում:

9. Հուշամեդալը արույրից պատրաստված ոսկեջրած (հարգը՝ 958) շրջանակ է, որի վրա պատկերված է ՀՀ Ազգային ժողովի շենքի մոդելը:

Հուշամեդալը երիզված է «ՀՀ Ազգային ժողովի նախագահի հուշամեդալ» մակագրությամբ:

10. Հուշամեդալի դարձերեսին դաջված է մեդալի հերթական համարը:

11. Հուշամեդալի հետ տրվում է վկայագիր:

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի
ղեկավար- գլխավոր քարտուղար **Հրայր Թովմասյան**